ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19-րդ դարը հիմք ծառայեց նոր գիտությունների զարգացման համար: Այդ զարմանահրաշ գիտություններից էին մարդաբանությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, գրականագիտությունը, քաղաքագիտությունը և այլն: Հնագիտության, ազգագրության և աշխարհագրության նման գիտությունների զարգացման համար անհրաժեշտ էին մեծ թվով պատկերային փաստարկներ և տեղեկություններ: Մինչ այդ արվեստագետները և քանդակագործները որևէ պատմական հուշարձան, բնության տեսարան կամ արվեստի ստեղծագործություն ցուցադրում էին գծանկարի միջոցով, բայց այդ գործերն իրականությունից բավական հեռու էին: Հենց այդ ժամանակ էր, որ լուսանկարչությունը օգնության եկավ հասարակությանը և պատճառ հանդիսացավ, որ մարդկանց տեսադաշտը աշխարհի և բնության նկատմամբ փոփոխվի ու զարգանա: Լուսանկարչության օգնությամբ մարդիկ սկսեցին իրական բնությունը մոտիկից զննել: Յուրաքանչյուր լուսանկարում ամեն ինչ մանրամասնորեն բնությունից թղթի վրա էր վերարտադրվում: Եվ զգալով իրականության ճշգրիտ արտացոլման պահանջը հասարակությունը ջերմորեն ընդունեց այդ արվեստը:

Ինչպես Եվրոպա, այնպես էլ Պարսկաստան լուսանկարչությունը մուտք է գործել 19-րդ դարում: Փաստերից ելնելով մասնագետները եկել են այն եզրակացության, որ լուսանկարչության պատմությունը Պարսկաստանում սկսվել է տասը տարի ավելի ուշ, քան Եվրոպայում, Ղաջար հարստության օրոք:

Արևմտյան հասարակությունը 19-րդ դարում սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել Մերձավոր Արևելքի, այդ թվում և Պարսկաստանի նկատմամբ: Աշխարհը արևելքը դիտում էր որպես իմաստային դաշտ: Ռոմանտիկ արևմուտքցիները գայթակղված էին արևելքի խորհրդավորությամբ և ջանում էին իրենք էլ մի պահ "փախուստի դիմել" իրենց ժամանակից ու մոտիկից ակնատես լինել այն ուղուն, որը տանում էր դեպի զարգացող քաղաքակրթություն:

Արևմուտքը 19-րդ դարի երկրորդ կեսին իր իշխանությունը տարածելու նպատակով նոր շուկաներ էր փնտրում և հատկապես սկսեց մեծ հետաքրքրքրություն ցուցաբերել Պարսկաստանի հանդեպ: Անգլիան և

Ռուսաստանը Պարսկաստանը դիտում էին որպես մի հզոր շուկա, որի միջոցով կկարողանային նոր ներդրողներ գրավել և ծառայեցնել իրենց հետագա նպատակներին: Նրանց հիմնական նպատակը ոչ թե Պարսկաստանի գրավումն էր, այլ երկրում հզոր ազդեցության ձեռքբերումը: Անգլիան անխոչընդոտ ճանապարհ էր փնտրում դեպի Հնդկաստան և այդ առումով ամենահարմար "բանալին" Պարսկաստանն էր: Անգլիան նաև ցանկություն ուներ Պարսկաստանի միջոցով Ռուսաստանի պլաններին տեղեկանալ, քանի որ Ռուսաստանը կարող էր Անգլիայի համար հետագա վտանգ ներկայացնել: Այսպիսով, այդ հետաքրքրությունը Պարսկաստանի հանդեպ աճեց՝ մասնավորապես Ղաջար հարստության (1785-1925) թագավոր Նասեր էլ Դին շահի (1848-1896) իշխանության օրոք: Այդ թագավորի մասին հակասական կարծիքներ էին տարածված: Նրան համարում էին ձախողված ղեկավար: Մինչդեռ շահը իրականացրել է մի շարք մոդեռնիստական բարեփոխումներ: Նա սահմանել է բազմաթիվ օրենքներ կապված ֆինանսական և ռազմական նոր կազմակերպման հետ: Նրա օրոք սկսեցին մատուցվել հեռագրային նոր ծառայություններ՝ տարբեր վայրերում փոստային հիմնարկներ հիմնելու միջոցով:

1851 թ. Թեհրանում բացվեց «Դար Օլ-ֆոնուն» անվամբ համալսարանը, որը եվրոպական չափանիշներին համապատասխան էր ստեղծվել: Պարսից շահի կարգադրությամբ մի խումբ պալատականներ և օտարազգիներ Եվրոպայում տարբեր մասնագիտություններ ստացան և վերադառնալով սկսեցին դասավանդել վերը նշված համալսարանում: Ղաջար թագավորները, հատկապես Նասեր էլ Դին շահը, մեծ սեր ունեին լուսանկարչության հանդեպ, այդ իսկ պատճառով բազմաթիվ լուսանկարներ են ստեղծվել «Դար Օլ-ֆոնուն»-ում մասնագիտացած լուսանկարիչների կողմից:

Այս բարեփոխումները շատ արագ էին ընթանում, և թագավորը հանդիպեց մի խումբ մարդկանց և հոգևորականների դիմադրությանը: Ընդդիմության հիմնական պատճառներից էր այն, որ թագավորը մի շարք հատուկ իրավունքներ (կոնցեսիաներ) տրամադրեց օտարազգիներին:

Այս կոնցեսիաների մեջ ամենակարևորները Reuter (1872) և ծխախոտ (1890) կոնցեսիաներն էին: Միաժամանակ Reuter-ին լիազորվում էր մի շարք իրավունքներ: Այսպիսով, Baron Julius de Reuter-ը իրավունք ստացավ երկաթգծային ճանապարհների, միջքաղաքային բեռնափոխանակման, ոռոգման ջրերի, գազի մատակարարման, հանքանյութերի արտահանման, ազգային բանկի հիմնադրման և տարբեր գործարաններ կառուցելու համար: Փաստորեն Reuter-ի կոնցեսիայով թագավորը վաճառեց Պարսկաստանը: Հասարակությունը, վախենալով թե Պարսկաստանը կգրավվի օտարազգիների կողմից,

խիստ դիմադրում էր և միայն ժողովրդի մի փոքր զանգվածն էր կողմ կոնցեսիաներին, ինչն էլ կապված էր թագավորական բանկի(Imperial Bank) հիմնադրման հետ: Ծխախոտի շահագործման իրավունքը շնորհվեց անգլիացիներին և թագավորը ժողովրդի կողմից հանդիպեց ուժեղ դիմադրության: Հոգևորականները նույնպես շարունակում էին իրենց բողոքը արտահայտել և դա տևեց այնքան ժամանակ մինչև այդ հրամանը չեղյալ համարվեց (1892):

Տվյալ քաղաքական իրավիճակում արևմուտքի ժողովրդի հոսքը դեպի Պարսկաստան գնալով աճում էր: Որոշ մարդիկ թագավորի հետ հանդիպման նպատակով էին դեպի Պարսկաստան ճամփորդում, մյուսները դիվանագիտական պաշտոններ զբաղեցնելու կամ էլ առևտրային պայմանագրեր կնքելու:

Վաղ ժամանակներում ճամփորդությունը պահանջում էր նախապատրաստվածություն և կազմակերպվածություն: Այս բոլորը պայմանավորված էր ճանապարհների կառուցապատման, փոխադրման միջոցների, հյուրանոցների, սնվելու վայրերի և այլ առաջնահերթ խնդիրների հետ: Այս անհրաժեշտ պայմանները դժվարությամբ էին մատակարարվում:

Որոշ վայրեր շատ վտանգավոր էին, որովհետև մարդիկ թալանվում էին ճանապարհների կողոպտիչների կողմից: Ճամփորդությունը բավական թանկ հաճույք էր: Միաժամանակ վերնախավի որոշ ներկայացուցիչներ հավատում էին, որ «Մեծ ճամփորդությունը» կրթության և գիտության մասն է կազմում, ինչի պատճառով էլ ճանապարհորդությունները դեպի Մերձավոր արևելք ավելի հաճախացան:

Մեզ հայտնի առաջին ճամփորդական տեղեկատվությունը առաջարկում էր պլանավորված զբոսաշրջություն դեպի Պարսկաստան, որը կազմել էր Թովմաս Քուքը (Thomas Cook) իր տղայի հետ 1890-ական թթ.: Նմանատիպ բացատրական ուղեցույց նա պատրաստել էր քսան տարի առաջ Եգիպտոս ճամփորդելու համար: Քուքի ճամփորդական ուղղեցույցը առաջարկում էր մանրամասն տեղեկատվություն կապված տրանսպորտային խնդիրների, ճամփորդական առավել նպաստավոր ուղիների, բեռնափոխանակման, լավագույն ճամփորդական եղանակի, հյուրանոցների և գների հետ:

Պարսիկները իրենք միայնակ և առանց ուղեցույցի կարող էին երկրի ներսում ճամփորդել, որն իրականացնում էին այն քարավանների օգնությամբ, որոնք ծառայում էին փոստային համակարգում: Երկաթուղիները հասարակության համար այնքան էլ հասանելի միջոց չէին: Փոստային ծառայության ձիերը ճամփորդության համար ամենաարագ և մատչելի միջոցն էին: Ամենագլխավորը ձիերի առույգ և առողջ լինելն էր: Ճամփորդները ճանապարհորդության ընթացքում կարող էին մթության մեջ մնալ և գիշերը անցկացնել փոստատներում

հարմարեցված անկյուններում: Միայն հեռավոր քաղաքների՝ ինչպես օրինակ Ռաշտի և Թեհրանի միջև հյուրանոցներ կային, ուր կարող էին գիշերել ճամփորդները: Ճամփորդության մեջ ամենահիմնական ծախսը ձի վարձելն էր, իսկ ուտելիքն ու խմելիքը շատ մատչելի էր: Չնայած ճանապարհային ուղղեցույցի օգնությամբ հնարավոր էր Պարսկաստանի քաղաքներում ճանապարհորդել, դեռևս առկա էին բազմաթիվ դժվարություններ: Դժվարության մի օրինակ է Քուքի՝ 1912թ ուղղեցույցում նշված այն փաստը, որ կանանց խորհուրդ չէ տրվում ճամփորդելը: Այնուամենայնիվ, զբոսաշրջիկները բոլոր դժվարություններին տեղյակ լինելով հանդերձ շարունակում էին ճամփորդել դեպի Պարսկաստան: 19-րդ դարում սովորաբար ճանապարհորդները իրենց ճամփորդության ընթացքում անձամբ չէին լուսանկարում: Նրանք տվյալ երկրից լուսանկարներ էին գնում կամ հիշատակի համար, կամ էլ որպես փաստ՝ հարազատներին ապացուցելու համար, որ նրանք եղել են այդ երկրում: Ճամփորդության ուղեկցողները զբոսաշրջիկներին խորհուրդ էին տալիս, թե որ լուսանկարչի աշխատանքները գնեն: Օրինակ, Սիրիայում ու Բեյրութում զբոսաշրջիկներին խորհուրդ էին տալիս, որ Ֆելիքս Բոնֆիսի (1831-1885) լուսանկարները գնեն: Եգիպտոսում, Լուկսորում ձեռք էին բերվում լուսանկարիչ Անտոնի Բետոնի (1825-1903) լուսանկարները: Թուրքիայում՝ Իստամբուլում այդ աշխատանքը վստահվում էր Պասգալ Սեպահին (մահացել է 1890), իսկ Պարսկաստանում՝ հայազգի լուսանկարիչ Անթուան Սևրուգինին:

Այս աշխատանքում, մենք կփորձենք պարզել, թե ինչու է Սևրուգինը աշխատել հատկապես Պարսկաստանում:

Արևմտյան ճանապարհորդների պատկերացումները Պարսկաստանի նկատմամբ ոչ իրատեսական էին և հիմնականում արևելքը դիտվում էր որպես առասպելական և մելամաղձոտ բնակատեղի: Եվրոպացի զբոսաշրջիկները Պարսկաստանի ցանկացած քաղաքի փողոցներում քայլելիս իրենց համար զարմանալի, անսովոր և խիստ հետաքրքիր տեսարաններ էին տեսնում: Արևմտյան կանայք երևակայական պատկերացումներ ունեին Պարսկաստանի թագավորական հարեմի և պարսիկ կանանց ապրելակերպի վերաբերյալ ու այդ պատկերացումները իրականացնում էին լուսանկարվելու միջոցով: Այդ դերը լուսանկարչական ապարատի առաջ գեթ մի պահ իրականացնելու նպատակով նրանք հագնում էին պարսիկ կանանց ավանդական հագուստը, գլխին գցում չադրան և իրենց մոտ դնում նարգիլե: Սևրուգինը այսպիսի լուսանկարներ շատ է ստեղծել, բայց առաջին իսկ հայացքից կնոջ մուսուլման չլինելու փաստը աչքի է ընկնում: Տվյալ ժամանակաշրջանում վերոհիշյալ մոտեցմամբ լուսանկար ստեղծելը հաճելի աշխատանք էր, բայց նույնը չենք կարող ասել

վավերագրական լուսանկարներ ստեղծելու մասին, որը իրականացվում էր անընդմեջ ճամփորդելու ընթացքում: Որպես հասարակության մի մասնիկը՝ լուսանկարիչը, գիտակցում էր, որ ճամփորդությունը դժվարին գործ է և դրան վերաբերվում էր որպես արկածախնդրության: Ճամփորդություն սկսելու հետ մեկտեղ, պետք էր հետագա դժվարությունների դեմ պայքարելու համար մանրամասնորեն ելքեր նախատեսել: Ինչպես արդեն նշվել է, թեկուզ տեղացի լուսանկարչի համար հյուրանոց կամ սնվելու որևէ վայր գտնելը այդքան էլ հեշտ չէր: Քաղաքները միացնող ճանապարհների միջև ցանկացած վտանգավոր դեպք կարող էր միշտ պատահել: Դրանից բացի, այն ժամանակվա լուսանկարչական գործիքները բավական մեծ չափեր ունեին, տեղ էին գրավում և տեղափոխելը դժվարին աշխատանք էր: Ապակե նեգատիվները, նկար տպելու անհրաժեշտ քիմիական նյութերը, լուսանկարչական ապարատի գործիք եռոտանին տեղափոխելը, ճամփորդության ընթացքում անհրաժեշտ մութ սենյակի ստեղծումը այդ դժվարությունների մի մասն էին: Այս բոլոր նեղությունները կրելով, Սևրուգինը կարողացավ ժամանակը և ժամանակի իրադարձությունները լուսանկարչական ապարատի օգնությամբ հավերժացնել: Այդ դժվարին պայմաններում նա աշխատել է Պարսկաստանի մշակույթը ցուցադրել տարբեր տեսանկյուններից: Արվեստագետը կարողացել է նայել արևելքին արևմտյան մարդու աչքերով և իր լուսանկարների միջոցով հաջողել է կապ հաստատել արևելյան ու արևմտյան մշակույթների միջև: Այսպիսով, տվյալ ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձը ուսումնասիրելով, պարզ է դառնում թե ինչպիսի պայմաններում է նա ստեղծագործել: Բայց դա խնդրի մի կողմն է շոշափում ու բավական պատճառ չէ, որ իրեն բացառիկ լուսանկարիչ համարենք: Այստեղ հարկ է անդրադառնալ նրա աշխատանքների յուրահատկությանը, որոնցից յուրաքանչյուրը արվեստի մի ստեղծագործություն է: Չդիտելով նրա լուսանկարները և միայն վերլուծելով դժվար է գաղափար կազմել թե նրա աշխատանքը որքանով է առանձնահատուկ, թե իր ժամանակներում և թե հիմա:

Անթուան Սևրուգինի լուսանկարները առաջին հայացքից անմիջապես խիստ տարբերվում են մյուս լուսանկարիչների աշատանքներից: Դա կապված է թե թեմայի, թե գեղարվեստականացած մթնոլորտի և թե հորինվածքի հետ: Նրա ընտրած դիմանկարներից յուրաքանչյուրը բացառիկ է իր դեմքի արտահայտչականությամբ, զգեստով, զարդերով: Նրա ստեղծած կերպարները դժվարությամբ են անհետանում դիտողի հիշողությունից: Արվեստագետը, ունենալով բարձր ճաշակ գեղեցիկի նկատմամբ, չի անտեսել ողբերգականը: Նա ոչ միայն ջանացել է թղթի վրա հավերժացնել կերպարի արտաքին նմանությունը, այլ

ուշադրություն է դարձրել կերպարների հոգեբանական կերտվածքին ու ներաշխարհին և իր միջամտությամբ յուրաքանչյուրին տվել է բանաստեղծական ձև ու ոճ: Արվեստագետը ինչպես արվեստանոցում, այնպես էլ դրսում հատուկ ուշադրություն է դարձրել լույսին և նրա ազդեցությանը օրվա տարբեր ժամերին: Լույս ու ստվերի հակադրությամբ նա հասել է ապշեցուցիչ էֆեկտների: Նման արդյունքի հասնելը տվյալ ժամանակաշրջանում, երբ լուսանկարչական արվեստը նոր էր ի հայտ եկել և լուսանկարչական գործիքները դեռ կատարելագործված չէին, այնքան էլ հեշտ չէր ու նա տարբեր հնարքների է դիմել:Նրա խմբակային լուսանկարներից յուրաքանչյուրը առաջին հերթին աչքի է ընկնում իր հորինվածքով: Սևրուգինը անշուշտ իր հայեցողությամբ էր դասավորում մարդկանց, բայց այս հանգամանքը չէր խոչընդոտում, որպեսզի մարդիկ իրենց բնական և հանգիստ զգային: Այս մոտեցումը չի նկատվում տվյալ ժամանակաշրջանի լուսանկարիչների մոտ և ուշադիր զննությամբ կարելի է հասկանալ, որ մարդիկ շատ կաշկանդված և լարված են այլ լուսանկարներում:

Նա լուսանկարել է նաև Պարսկաստանի տարբեր անկյուններում գտնվող պատմական հուշարձանները, որոնցից շատերն արդեն գոյություն չունեն և այդ լուսանկարներից յուրաքանչյուրը պատմաբանների և հնագետների համար բացառիկ արժեք են ներկայացնում: Այսպիսով, շատ կարճ ժամանակ պահանջվեց, որ Անթուանը դառնա Ղաջար դինաստիայի թագավոր Նասեր էլ Դին շահի անձնական լուսանկարիչը: Ավելին, նրա դերը պալատական կյանքում այնքան նշանավորվեց, որ նա ներկա էր գտնվում ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ և փաստեր է գրանցել: Ղաջարների անձնական խնջույքները պատկերող մոտավորապես հարյուր կտոր լուսանկար է պահպանվել, ինչպես նաև բազմաթիվ այլ լուսանկարներ, որոնք ներկայացնում են թագավորական հարեմը, կանանց պարերը և այլն:

Անթուան Սևրուգինի լուսանկարները դիտելով կարող ենք ամբողջովին պատկերացում կազմել 19-րդ դարում Պարսկաստանի իրավիճակի մասին, որն իր մեջ ներառում է Պարսկաստանի մշակույթը, ազգային սովորույթները, փողոցային անցուդարձը և աշխատանքը: Պատահական չէ, որ համաշխարհային լուսանկարչության մասին խոսելիս անկասկած հիշատակվում է Անթուան Խան Սևրուգինի անունը:

Հարկ է հուսալ, որ Սևրուգինը կգրավի իր արժանի տեղը մեր այլ մեծանուն դեմքերի կողքին, երբ նրա կյանքը և գործունեությունը ըստ ամենայնի կուսումնասիրվի: